ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 24 ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2016թ գ. Վարդենիկ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայքի ավագանի	Կողմ	Դեմ	Զեռնպահ
1. Ալեքսանյան Է.			
2. Բաղալյան Ա.			
3. Բաղալյան Կ.			
4. Ջիրոյան Ս.			
5. Ավետիսյան Ս.			
6. Մելքոնյան Վ.			
7. Մովսիսյան Ռ.			
8. Պետրոսյան Մ.			
9. Սևոյան Ս.			

Վարդենիկ համայնքի ղեկավար Հ.Հովեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 25 ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2016թ գ. Վարդենիկ

ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Համայնքի 2016թ բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 5112 հոդվածից պակասեցնել ընդամենը 2795.0 հազար դրամ և հատկացնել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասին չպատկանող)» նախահաշվին (բաժին 06, խումբ 01, դաս 01):
   Այդ թվում 2700.0 հազար դրամը հատկացնել նշված նախահաշվի 5113 հոդվածին Բանավան թաղամասի զբոսայգու սկզբնամասում վերանորոգման աշխատանքներ կատարելու, իսկ 95.0 հազար դրամը՝ նույն նախահաշվի 5134 հոդվածին՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր կազմելու համար:
2. Համայնքի 2016թ բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 5112 հոդվածից պակասեցնել ընդամենը 16658.0 հազար դրամ և հատկացնել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Վարդենիկի փողոցների լուսավորում » նախահաշվին (բաժին 06, խումբ 04, դաս 01):
   Ընդ որում 16017.0 հազար դրամ ավելացնել նշված նախահաշվի 5112 հոդվածին՝ թիվ թիվ 4, թիվ 9, թիվ 11, թիվ 13 և թիվ 19 փողոցներում արտաքին լուսավորության համակարգ կառուցելու նպատակով և 641.0 հազար դրամ նույն նախահաշվի 5134 հոդվածին՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր կազմելու համար :
3. Համայնքի 2016թ բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 5112 հոդվածից պակասեցնել ընդամենը 5150.0 հազար դրամ և հատկացնել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Վարդենիկի ջրամատակարարում» նախահաշվին (բաժին 06, խումբ 03, դաս 01, ծրագիր 58):
   Այդ թվում 3950.0 հազար դրամը հատկացնել նշված նախահաշվի 5112 հոդվածին համայնքի թիվ 6 փողոցում խմելու ջրագիծ կառուցելու՝ 1000.0 հազար դրամը 5113 հոդվածին համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի վերանորոգման նպատակով , իսկ

200.0 հազար դրամը՝ նույն նախահաշվի 5134 հոդվածին՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր կազմելու համար:

4. Համայնքի 2016թ բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 5112 հոդվածից պակասեցնել ընդամենը 5052.0 հազար դրամ և հատկացնել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «ոռոգման համակարգերի վերանորոգում և շահագործում» նախահաշվի (բաժին 04, խումբ 02, դաս 04) :

Այդ թվում 4812.0 հազար դրամը հատկացնել նշված նախահաշվի 5112 հոդվածին համայնքի ոռոգման առուների տարբեր հատվածներում պողպատյա խողովակներ տեղադրելու նպատակով, իսկ 240.0 հազար դրամը՝ նույն նախահաշվի 5134 հոդվածին՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր կազմելու համար:

Համայքի ավագանի	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Ալեքսանյան Է.			
2. Բաղայան Ա.			
3. Բաղալյան Կ.			
4. Ջիրոյան Ս.			
5. Ավետիսյան Ս.			
6. Մելքոնյան Ա.			
7. Մովսիսյան Ռ.			
8. Պետրոսյան Մ.			
9. Սևոյան Ս.			

Վարդենիկ համայնքի ղեկավար Հ.Հովեյան